ՀՏԴ 721. 001 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Նունե Գագիկի Պետրոսյան[1]*, Լիլիթ Սամվելի Բաբայան[1], Սերոբ Խոսրովի Գյուլխանջյան[2]

[1]Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք.Երևան, ՀՀ
[2]«Հայնախագիծ» ինստիտուտ ԲԲԸ, ք.Երևան, ՀՀ
**nunepet@yahoo.com*

Հանրային տարածքները ներկայում նշանակալի դեր են ստանձնել բնակավայրերի հատակագծային կառուցվածքում և բնակիչների սոցիալ-տնտեսական բարեկեցության գործընթացում: Դրանք զուտ քաղաքաշինական կառուցվածքային տարրերից վերածվել են սոցիալական շփումների հարթակների և բնակչության կյանքում կարևոր դերակատարություն ունեցող բաղադրիչի: Ուստի դրանց կազմավորման գործընթացը պետք է ենթարկվի հստակ կանոնների՝ բավարարելու հասարակության պահանջները և մերժված չլինելու վերջիններիս կողմից: Բերդ քաղաքի հիմնախնդիրներն առավել արդիական են, քանի որ գտնվելով մարզի այլ բնակավայրերի սահմանափակ բարենպաստության գոտում, կարիք ունի ինքնաբավության:

Առանցքային բառեր. *հանրային կլաստեր, սոցիալական ինտեգրում, հանրային ենթակառուցվածք, գործառույթների բազմազանություն*

Ներածություն

Հասարակական վայրերն այն հարթակներն են, որտեղ մարդկանց միջև կայանում է սոցիալ-մշակութային բնույթի հաղորդակցություն: Միևնույն ժամանակ դրանք քաղաքի առավել դինամիկ զարգացող տարածքներ են, որոնք մշտապես ենթարկվում են քաղաքի և նրա բնակիչների վերափոխումների: Դրանք քաղաքների հենց այն հատվածներն են, որոնք կարող են գոյատևել ինքնավար, վերածնվել, վերականգնվել՝ արտացոլելով ժամանակի պահանջը և հասարակության փորձը, այդ գործընթացում պահպանելով կամ կորցնելով ինքնությունն ու արժեքը: Ընդ որում, վերոնշյալ փոփոխման գործընթացում հանրային տարածքները դիտարկվում են իրենց ծավալատարածական, սոցիալ-մշակութային, քաղաքական և տնտեսական տեսանկյուններով և պայմանավորված են ինչպես հասարակության, այնպես էլ տեղական իշխանությունների դերակատարմամբ: Այնուհանդերձ, հանրային տարածքների ֆիզիկական միջավայրի կազմավորման և վերակազմավորման գործընթացի առանցքում մարդակենտրոն մոտեցումն է՝ բավարարելու ժողովրդի կարիքները, ցանկությունները:



Նկ. 1. Հանրային տարածքի կառուցվածքային ուրվագիծ

Վերոնշյալը նկատառում է մարդու և հանրային տարածքների փոխազդեցության երկու ոլորտ՝ գիտակցական և ենթագիտակցական օգտագործում, կախված մարդու կարիքներից և ցանկություններից: Հետևաբար, դա մարդու բնակության կենսամիջավայրի մի մասն է, ուստի և պետք է արտացոլի տվյալ ժամանակաշրջանի կենսապայմաններն առավել ներդաշնակ և առավել լիարժեք բավարարող կենսառճը [1] (նկ.1):

Այլ կերպ ասած, բացի ձևավորվելուց և հասարակության մշակութային, ինքնության, պատմության պահանջների հարմարվելուց, հանրային միջավայրը ձևավորում և դաստիարակում է հասարակությանը արժեքները, այնպես որ միշտ առկա է մարդու և միջավայրի փոխազդեցությունը, քանի որ մարդը ձգտում է այն վայրերին, որտեղ կարող է բավարարել իր սոցիալ-մշակութային կարիքները՝ համադրելով գործունեության տարբեր տեսակներ: Ուստի, հենց հանրային տարածքներն են, որ իրենց ձևափոխություններով արտացոլում են օգտագործողների կենսամակարդակը, կարիքները, հակառակ դեպքում՝ կտրված լինելով հասարակության իրական ցանկություններից, դրանք կարող են մերժված լինել հասարակության կողմից:

Հետևաբար, քաղաքային տարածքների կազմավորման և վերակազմավորման նախագծման գործընթացում կարևորվում են փողոցների, զբոսայգիների և հանրային փոխազդեցության այլ տարածքների նշանակությունը մարդկանց միջեւ փոխհարաբերությունների և սոցիալական համակեցությանը նպաստելու խնդրում:

Քաղաքային բաց տարածքները կապված են ժամանցի, հանգստի, հանդիպումների, տոնակատարությունների հետ և ունեն կարևոր դերակատարում քաղաքների սոցիալ-տնտեսական հիմքերի կայացման և կայունացման գործում: Առևտրային կենտրոնների, հրապարակների, շուկաների և բակերի բաց տարածությունները կարող են հանրային կլաստերի մաս հանդիսանալ և նոր, ժամանակակից քաղաքային միջավայր ստեղծել:

Այնուհանդերձ, առկա են հանրային ենթակառուցվածքին առնչվող մի շարք խնդիրներ, որոնց լուծումը զգալիորեն դյուրին կդարձներ մարկանց հաղորդակցության գործընթացը և կկազմավորեր միասնական հանրային կլաստեր՝ քաղաքի հատակագծային կառուցվածքում, այն է.

- հանրային կլաստերը լիարժեք զարգացած չէ,
- հանրային տարածքները գտնվում են սահմանափակ բարենպաստության կամ անբարեպաստ մատչելիության գոտում,
- հանրային տարածքներն ընդմիջվում են մեքենաների համար հատկացված տարածքներով,
- ձևավորված չէ միասնական համայնապատկեր՝ ամբողջացնելու հանրային տարածքների համակարգը,
- բացակայում է հանրային տարածքների անընդմեջ կամ փոխկապակցված ենթակառուցվածքը (հանրային կլաստեր):

Դիտարկված խնդիրների լույսի ներքո անդրադարձ կատարելով ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի հանրային կլաստերի ձևավորման գաղափարին, ի հայտ են գալիս մի շարք հնարավորություններ, որոնք բացի հանրային կլաստերի ձևավորումից, անուղղակի խթան են նաև համայնքի ու ողջ միկրոռեգիոնի (հաշվի առնելով աշխարհագրական տեղադիրքով պայմանավորված Բերդ համայնքի որոշակի կտրվածությունը մարզի այլ տարածքներից) տնտեսության այլ ոլորտների զարգացման համար:

Առկա վիճակի վերլուծություն

Բերդ քաղաքը տեղակայված է Տավուշ գետի ողողահունին հարող հատվածում: Շրջապատված է մի քանի բլուրներով և քաղաքի միայն չնչին մասն է գտնվում համեմատաբար հարթ տարածքի վրա: Գերակշիռ մասը զբաղեցնում են աստիճանաբար բարձրացող լեռնալանջերը: Մատենագրության մեջ ք.Բերդը հիշատակվում է նաև Բերդագյուղ, Բերդգյուղ, Թավուզղալա, Թոուս, Շլորուտ, Ոլորուտ անուններով: Անունը ստացել է Տավուշ բերդի անունից: Չնայած քաղաքի հատակագծային կառուցվածքի անկանոնությանը, պայմանավորված ռելիեֆային պայմաններով, այնուհանդերձ նկատելի է տարբեր գործառույթների հստակ տեղաբաշխում այդ կառուցվածքում: Քաղաքի հատակագծային կառուցվածքում գծային տարրերը ներկայացված են հետևյալ կերպ:

Քաղաքի հիմնական զարկերակը՝ Մաշտոցի պողոտան կազմում է Հ-36 հանրապետական նշանակության ճանապարհի՝ քաղաքի միջով անցնող հատվածը: Այս ճանապարհին կից է ձևավորված քաղաքի հիմնական բազմաբնակարանային բնակելի ֆոնդը, ներկայացված հիմնականում 4...5 հարկանի և մեկ 9 հարկանի բազմաբնակարան շենքերով: Շենքերի առաջին հարկերը հիմնականում կազմակերպված են որպես հասարակական տարբեր նշանակության օբյեկտներ՝ ձևավորելով հանրային միջավայրի համայնապատկերը:



Նկ. 2. Բերդ համայնքի հատակագծային կառուցվածքում հանրային կլաստերի ուրվագիծ

Մյուս հատակագծային գլխավոր առանցքը Հայկ Նահապետի փողոցն է, որը ճյուղավորվելով Մաշտոցի փողոցից, շարունակվում է դեպի արդյունաբերական հանգույց և դեպի կից Վ.Կ.Աղբյուր բնակավայր։

Հաջորդը Լևոն Բեկի ճյուղավորումն է, որն առաջնորդում է դեպի քաղաքի հասարակական-հոգևոր՝ Լևոն Բեկի հրապարակ և այնտեղից շարունակվում դեպի վարչական՝ քաղաքապետարանին կից հրապարակ և դեպի Սորաններ դենդրոպարկ։

Ներկայում հանրային ենթակառուցվածքը թույլ է զարգացած։ Քաղաքի տարածքում ցրված տեղաբաշխված են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտները (դպրոցներ, նախակրթարաններ, առողջապահական հաստատություններ)՝ մատչելիության շառավիղերի հաշվառմամբ։ Առկա են հանրային զբոսայգի, մասնագիտացված կրթական հաստատություններ, մշակույթի տուն և մարզադաշտ։

Հանրային օբյեկտների տեղաբաշխման վերլուծությունը հստակ եզրագծում է կլաստերի «սաղմնային» կառուցվածք։ Հանրային գործառույթը ևս տեղաբաշխված է ըստ խմբավորումների, որոնցից հարկ է առանձնացնել.

- վարչական,
- հասարակական, ժամանցային, մշակութային,
- ռեկրեացիոն, բնապահպանական, և այլ բնույթի կենտրոնացումները՝ քաղաքի տարբեր հատվածերում, մասնակիորեն ձևավորելով հանրային տարբեր բնույթի խմբավորումների հրապարակ-կլաստերների՝ քաղաքային գծային տարրերով միմյանց միավորված համակարգի հանգուցային բաղադրիչ տարրերը (նկ.2)։

Առավել հստակ ձևավորելու համար հանրային կլաստերը և նման տարածքների բաշխվածությունը քաղաքի կառուցվածքում շարունակական և անընդմեջ կազմակերպելու նպատակով՝ ստորև դիտարկվում են բաղադրիչ առկա տարրերը, կլաստերային ամբողջական համակարգի ձևավորմանը միտված բացակայող կամ արդիականացման ու զարգացման միտված բաղադրիչների փոխկապակցված ցանցի հանգուցակետերը։

Բազմագործառույթ հանրային հանգույց

Լևոն Բեկի հրապարակը ձևավորված է որպես կարևոր տրանսպորտային և հանրային հանգույց։ Այստեղից են բաժանվում Իջևան-Բերդ, Բերդ-Չինարի, Բերդ-Մովսես և դեպի դենդրոպարկ գնացող ճանապարհները։ Հրապարակը ձևավորված է որպես մշակութային՝ ներառելով թե հոգևոր (ք.Բերդի ս.Հովհաննես եկեղեցի) և թե հասարակական (ժամանցային, հյուրանոցային, տրանսպրորտային) կառույցներ։ Հրապարակին կից առկա է երկու չգործող, սակայն բնակավայրի համար մեծ կարևորություն ունեցող օբյեկտ.

- *առևտրային*-տնտեսության զբոսաշրջային ոլորտի զարգացման պարագայում ներքին և արտաքին այցելուների հոսքերի համար գրավչության նշանակալի արժեք ունեցող կառույց՝ գյուղատնտեսական մթերքների շուկան (ներկայում՝ չգործող),

• *տրանսպորտային*-քաղաքի կենտրոնից դեպի բարձրադիր հատվածում տեղակայված դենդրոպարկ նախատեսված, սակայն չկառուցված ճոպանուղու ստորին կայարանը: Սորաններ դենդրոպարկում կառուցված մյուս կայարանը վերակազմավորվել է սրճարանի, սակայն պահպանելով հորինվածքային լուծման առաջնայնությունը, այժմ ևս արժեքավոր է՝ քաղաքի տարբեր հատվածներից դիտելիության առումով:

Առևտրային բաղադրիչի հեռանկարային կազմակերպման առաջարկ

Հրապարակի (բազմագործառույթ՝ հոգևոր, մշակութային, սպասարկման, տրանսպորտային, հանրային կլաստերի) կառուցապատում վերակենդանացնելու նպատակով առաջարկվում է արդիականացման ենթարկել շուկայի մետաղական և ապակե կոնստրուկցիաներով կառուցված հին կառույցը: Առաջին հարկում, որը գտնվում է հիմնական ճանապարհից նիշերով որոշակի ցածր հատվածում և դիտելի չէ հիմնական ճանապարհից, նախատեսվում է տարածքը գոտևորել՝ առևտրի սրահների, պահեստային հատվածի և գյուղատնտեսական մթերքների վաճառքի շուկայի: Վերին հարկը (ներկայումս կառույցի տանիքային հատվածը) անհրաժեշտ է վերակազմավորել կանաչ տանիքի, թեթև կոնստրուկցիաներով (փայտ, մետաղական պերգոլաներ) և տեղական ավանդական կառուցապատման դրվագներով տեղական գյուղատնտեսական արտադրանքի և հուշանվերների վաճառքի տաղավարների, ինչդպես նաև բացօթյա սրճարանի՝ ապահովելով արժեքավոր դիտադաշտ դեպի եկեղեցի և քաղաքային հրապարակ: Վերակազմավորման գործընթացում տանիքի նոր ավելացվող հատվածներին կտեղակայվեն արևային մարտկոցներ, որոնք կապահովեն կառույցն այլընտրանքային էներգիայով:

Ակնկալվող արդյունք

Հրապարակը կստանա ամբողջականություն՝ Եկեղեցու հակադիր կողմում լքյալ կառույցի վերակազմավորմամբ և գրավիչ ու արժեքավոր ճարտարապետական օբյեկտի առաջացմամբ: Արդիականացված շուկան կկազմի բնակավայրի զբոսաշրջային գրավչություններից մեկը և կազմակերպված զբոսաշրջային երթուղիների պարտադիր այցելելի հանգուցակետը՝ կահավորված լինելով կից առկա ավտոկայանատեղերով, կունենա այցելությունների համար հարմարավետ պայմաններ և տեղական արտադրանքի համար կազմակերպված առևտրային շարքեր՝ տեղաբնակների որոշակի հատվածի համար ապահովելով աշխատատեղեր և իրացման շուկա: Կառույցը կփրկվի հետագա քայքայումից և ոչնչացումից՝ պահպանելով քաղաքի պատմական որոշակի շերտ (նկ.3):

Նկ. 3. Բերդ քաղաքի լքված շուկայի վերակառուցման առաջարկ (հեղինակ՝ Պավիտրան Բալամուրուգան)

Տրանսպորտային բաղադրիչի հեռանկարային վերակազմավորման առաջարկ

Ճոպանուղու կայանը: Կառույցն իրականացված է քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկում՝ կապ հաստատելու երկու հանգուցային կետերի՝ կենտրոնի և դենդրոպարկի միջև: Ընդ որում, ստորին կայարանի տեղադիրքն ընտրված է այնպես, որ ապահովի քաղաքի գրեթե բոլոր հատվածներից համազոր մատչելիություն:

Դենդրոպարկի միակ կապը քաղաքի կենտրոնի հետ որոշակիորեն սահմանափակում է վերջինիս այցելելիությունը և լիարժեք ծառայեցումը թե տեղաբնակների և թե այցելուների ռեկրեացիոն կարիքները բավարարելու պահանջը: Որպես խնդրի լուծում կարող է դիտարկվել որոշակի բարեփոխումների (միջոցառումների) իրականացում (մատչելի դարձնելով վերջինիս հասանելիության ընդլայնումը՝ նախկինում արդեն իսկ նախատեսված ճոպանուղու կառուցմամբ): Ներկայում, անմիջական և կարճ այլընտրանքային կապի բացակայությունը (այժմ գործում է միակ մեծ թեքության ոլորապտույտ ճանապարհահատվածը) զգալիորեն դժվարացրել է դենդրոպարկ և կից թանգարանային գոտի-մշակութային կլաստեր այցելությունները:

Առկա կառույցը ևս որոշակի հետաքրքրություն է ներկայացնում՝ կոնսոլային առաջ կարկառված հատվածով և երկհարկ հորինվածքով: Կառույցն անմիջականորեն հարում է ճանապարհի երթևեկային մասին և կից հարթակի բացակայությունը որոշակի սահմանափակում է վերջինիս՝ որպես լիարժեք հասարակական և մարդկային հոսք նախատեսող կառույց ծառայելը: Բացի այդ, կառույցն արդեն մասնակիորեն ձևափոխվել է սրճարանի կիսակառույցի: Հավաստելով ճոպանուղու անհրաժեշտությունը քաղաքի կենտրոնի և ռեկրեացիոն գոտու միջև արագ և հարմարավետ կապ հաստատելու առումով, անհրաժեշտ է իրականացնել արդիականացված նոր ստորին կայանի իրականացում՝ ժամանակակից պահանջների և տեխնիկական հնարավորությունների ապահովմամբ:

Հեռանկարային կազմակերպման առաջարկ

Դա նշանակում է որ ճոպանուղու ծրագրի վերագործարկման պարագայում հարկ է կառույցը հիմնովին փոփոխության ենթարկել՝ շինությունը որոշակիորեն կարմիր գծից հետ դնելու միջոցով ապահովելով ինչպես հանրության վերաբաշխման հարթակ, այնպես էլ

վերանայել շինության բարձրությունը, ինչը ներկա վիճակով չի բավարարում ճոպանուղու և առկա կառուցապատումների միջև անվտանգ բարձրության ապահովման պահանջին (նկ.4)։

Նկ. 4. Բերդ քաղաքի ճոպանուղու լքված կայանի վերակառուցման առաջարկ

Ակնկալվող արդյունք

Հրապարակը կվերափոխվի բնակավայրի հանրային գործառույթների կենտրոնացման կիզակետի՝ որպես զբոսաշրջային գրավչության մի քանի օբյեկտներով ձևավորված ենթակառուցվածքի հանգուցակետ (հոգևոր մշակութային կառույց, հանրային տարածք, բազմագործառույթ առևտրային համալիր, ճոպանուղի, հյուրանոցային համալիրներ)՝ այդ գործընթացում ձեռք բերելով ամբողջական ճարտարապետական միասնական նախագծի շրջանակում կազմակերպված միջավայրի կարգավիճակ և կազմակերպված հոսքերի կենտրոնացման և բաշխման վայր։

Ռեկրեացիոն-բնապահպանական բաղադրիչի հեռանկարային վերակազմավորման առաջարկ

Դենդրոպարկ: Ինքնին եզակի և խիստ արժեքավոր ռեսուրս է՝ գրավչության իր շրջանակով և բնակավայրի տարածքում վերջինիս առկայությունն արդեն իսկ նշանակալի գրավչություն է հաղորդում։ Այստեղ է տեղակայված նաև ճոպանուղու վերին կայարանը՝ դիտահարթակով, որը սակայն ձևափոխված է և գործում է որպես հասարակական սննդի օբյեկտ (նկ.5)։

Դենդրոպարկի տարածքում նախկինում տեղակայված են եղել հանրային տարաբնույթ օբյեկտներ՝ բացօթյա լողավազան, զրուցարաններ, տաղավարներ, որոնք սակայն չեն պահպանվել։ Դեպի այգի ճանապարհահատվածը գտնվում է քայքայվածության բարձր աստիճանի վիճակում։ Մուտքային հատվածին կից առկա է ավտոմեքենաների կայանատեղ, ինչը բարձրացնում է տարածք այցելությունների համար հարմարավետության որոշակի պայմաններ։

Ներկայում դենդրոպարկը ևս ունի գրավչության որոշակի աստիճան՝ տարվա ընթացքում կազմակերպվող փառատոների, միջոցառումների համար ծառայելով միակ հնարավոր վայր։

Տարածքի գրավչությունն առավել նշանակալի է դառնում վերջինիս մատչելիության գոտում քաղաքային թանգարանի տեղակայմամբ։ Թանգարանն ունի բավականին հարուստ և

արժեքավոր հավաքածու (թեև տարածքային սահմանափակ ռեսուրսներ)։ Շինության դիրքը ևս առաջնային է և ընկալելի հենց պարկի մուտքի մոտից (նկ.6)։

Նկ. 5. Բերդ քաղաքի ճոպանուղու վերին կայան

Նկ. 6. Բերդ քաղաքի պատմության թանգարան

Լոռու մարզի Գյուլագարակի դենդրոպարկի հարևանությամբ տեղակայված հանգստյան տանը սոսիների ծաղկման շրջանում առկա է մարդկային մշտական հոսք՝ անգամ չբավարարելով բոլոր ցանկացողների կարիքները։ Բերդի դենդրոպարկը զուրկ է նման հնարավորությունից, քանի որ քաղաքում հյուրանոցային սակավ կառույցները գտնվում են տվյալ տարածքից զգալի հեռավորությամբ (զուցե ոչ այնքան ֆիզիկապես, որքան ճանապարհի խիստ թեքության և տեխնիկական վատ վիճակի պատճառով), ինչը գրեթե անհնար է դարձնում դենդրոպարկի տարածքում ամենօրյա բուժիչ զբոսանքների կազմակերպման հնարավորությունը։

Ռեկրեացիոն բաղադրիչի լիարժեք գործառությունն ապահովելուն միտված և դենդրոպարկի այցելելիությունը տարվա բոլոր ժամանակահատվածներում ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ենթակառուցվածքների զարգացման որոշակի միջոցառումների համալիր իրականացում, ինչը կապահովի զգալի արդյունքներ՝ թե՛ տեղացիների և թե՛ այցելուների համար։

Հեռանկարային կազմակերպման առաջարկ

Դենդրոպարկի արդիականացման և բարեկարգման ուղղությամբ առաջարկվում են հետևյալ մոտեցումները.

- դենդրոպարկի տարածքում առկա և նախկինում արդյունավետ գործող (ներկայում՝ կիսաքանդ) ջերմոցների համալիրի արդիականացման հենքի վրա տարածքում ձևավորել տնկարան՝ դենդրոպարկի տեսականին հարստացնելու համար նոր բուսատեսակների տնկման, հարմարեցման, ինչպես նաև վաճառքի համար,
- արդիականացնել պարկի արահետաճեմուղային և ենթակառուցվածքային համակարգը,
- տարածքի լանդշաֆտային կազմակերպման իրականացում՝ բուսատեսակների այնպիսի ընտրությամբ, որպեսզի ողջ տարվա ընթացքում տարածքում առկա լինի գունային բազմերանգ գամմա։

- պարկի տարածքում առկա բացատում ռեկրեացիոն համալիրի իրականացում՝ հետևյալ կառուցվածքով.

-նախկինում գործող (ներկայում՝ կիսախարխուլ վիճակում գտնվող և աստիճանաբար աղբանոցի վերածվող) ջրավազանի հենքի վրա փոքրաչափ ջրաշխարհի իրականացում՝ ամբարված ջուրը դատարկելիս այգու ոռոգման նպատակներով կիրառելու հեռանկարով (նկ.7)։ Տվյալ կառույցին անհրաժեշտ օժանդակ ենթակառուցվածքը նախատեսվում է ապահովել ժայռին ներգծված և դենդրոպարկի կողմում միայն 5-րդ՝ կանաչ ճակատ ունեցող բազմաֆունկցիոնալ համալիրի կազմում (հանդերձարաններ, ցնցուղարաններ, հանդերձանքի վարձակալություն կինոցուցադրման կենտրոն՝ ք.Բերդի վերաբերյալ լազերային ներկայացման դիտման համար՝ Տավուշի բերդի պահպանված հատվածները որպես կենդանի դեկորացիաներ օգտագործելով և այլն)։ Կանաչ տանիքը կօգտագործվի որպես դիտահարթակ՝ տարածքից դեպի Ցլիկ Ամրամի բերդ և քաղաքային ընդհանուր համայնապատկեր բացվող տեսարանները դիտելու (նկ.8)։



Նկ. 7. Սորան դենդրոպարկի արդիականացման առաջարկ

Նկ. 8. Տավուշ բերդ

- տեղանքի առաջնային դիրքը ինքին թելադրում է ևս մեկ գրավչություն՝ տվյալ հատվածից զիփլայնի (ֆունիկուլյորի) կազմակերպում դեպի գետափնյա հանգստի նախատեսվող գոտի (նկ.9),

Նկ. 9. Այլընտրանքային կապի (ֆունիկուլյոր) առաջարկ

- դենդրոպարկի տարածքում ծառերից ազատ զգալի տարածքի՝ ներկայում հողային ծածկույթով մարզադաշտի տարածքի ծածկաշերտի իրականացում կարմիր ավազով՝ հնարավորություն ստեղծելով նաև զբոսաշրջային այցելությունների որոշակի խմբի համար կահավորված և վերահսկվող վրանային ճամբարի կազմակերպման հնարավորություն (վարձավճարով) [2] (նկ.10)։

Ակնկալվող արդյունք

Վերոնշյալ միջոցառումների արդյունքում կընդլայնվի ինչպես միջոցառումների ժամանակացույցը, այնպես էլ աշխարհագրությունը:

Ընդ որում նախապես վարելով գովազդային քաղաքականություն՝ հնարավոր կլինի ապահովել նախատեսված միջոցառումների այցելելիությունը և միջոցառումների մասշտաբները համապատասխանեցնելու կանխատեսելի այցելուների քանակին:

Եզրակացություն

Նկ.10. Վրանային ճամբար Սորաններում

Հանրագումարի բերելով դիտարկման արդյունքները, հանրային կլաստերի արդյունավետ գործառնության բնորոշումը կարելի է ընդհանրացնել հետևյալ դրույթներում:

- Հանրային տարածքը պետք է ներառի գործառույթների բազմազանություն, որը կնպաստի մարդկանց սոցիալական շփումներին՝ բնակարանից դուրս: Տարածքների օգտագործման բազմազանությունը կնպաստի նաև տարածքների անվտանգությանը:
- Հանրային տարածքի միջոցով պետք է ապահովվի փողոցային համայնապատկերի բազմազանություն, քանի որ շենքերի, մայթերի և փողոցի՝ մարդու ընկալման մասշտաբին համապատասխան հատվածի միջև կապն ապահովվում է այդ տարածքների միջոցով և նպաստում է քաղաքային միջավայրի գրավչությանն ու հաճախելիությանը:
- Հասարակական տարածքը (մատչելի փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ, մայթեր, հեծանվային ուղիներ և քաղաքային կահավորման տարրեր և այլն) պետք է խթանեն մարդու և քաղաքային միջավայրի ներդաշնակ փոխազդեցությունը, նպաստելով միջավայրի կենսունակությանը՝ քաղաքի բոլոր հատվածներում (կենտրոնական և արվարձանային):
- Որակյալ հանրային տարածքները պետք է ոչ միայն ձևավորեն բարեկարգ, հարմարավետ և օգտագործելի քաղաքային միջավայր բնակիչների համար, այլ առաջարկվող հանրային գործառույթների միջոցով նպաստեն քաղաքի տնտեսության խթանմանը:
- Հանրային պահանջներին բավարարող և տեղական առանձնահատկությունների հաշվի առնմամբ ձևավորված հանրային միջավայրը պետք է նպաստի քաղաքի որոշակի հատվածների ինքնության ձևավորմանն ու ճանաչելիությանը:
- Հանրային կլաստերի ձևավորմամբ տարածքների փոխադարձ շաղկապված անընդմեջ շարունակական միջավայրը պետք է ապահովի տարածքների բոլոր օգտագործողների (հետիոտն, տրանսպորտ, բնակչության սակավաշարժունակ խմբեր և այլն) համար համազոր ու անվտանգ պայմաններ:

- Հանրային տարածքները զգալի դերակատարություն պետք է ունենան քաղաքի բնապահպանական վիճակի բարելավման գործընթացում, քանի որ կանաչ առանցքները և ռեկրեացիոն գոտիները ձևավորում են կլաստերի գծային կամ հանգուցային բաղադրիչների փոխկապակցված համակարգ [3]:

ФОРМИРОВАНИЕ ОБЩЕСТВЕННОГО КЛАСТЕРА В ГОРОДЕ БЕРД ТАВУШСКОЙ ОБЛАСТИ РА

Нуне Гагиковна Петросян[1*], Лилит Самвеловна Бабаян[1], Сероб Хосровович Гюлханджян[2]

[1]Национальный университет архитектуры и строительства Армении, г.Ереван, РА
[2]ОАО "Армпроект", г.Ереван, РА
[*]nunepet@yahoo.com

В настоящее время общественные места играют значимую роль в планировании поселений и социально-экономическом благополучии жителей. Они из сугубо градостроительных структурных элементов трансформировались в платформы социального диалога и приобрели роль важного компонента жизни людей. Поэтому процесс их формирования должен соответствовать четким правилам и удовлетворять требованиям общества и не быть отвергнутым последним. Проблемы г.Берда достаточно актуальны, поскольку сам город и весь регион находятся в отдаленной и ограниченной зоне доступности от других населенных пунктов области и возникает необходимость в самообеспечении.

Ключевые слова: *общественный кластер, социальная интеграция, общественная инфраструктура, разнообразие функций*

FORMATION OF PUBLIC CLUSTER IN BERD CITY OF TAVUSH PROVINCE OF RA

Nune Petrosyan[1*], Lilit Babayan[1], Serob Gyulkhanjyan[2]

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
nunepet@yahoo.com

Public spaces are currently playing a significant role in the planning of settlements and in the social and economic well-being of the residents. They have been transformed from purely urban structural elements to an important part of the social dialogue platforms and a component having an important role in the people's lives. Therefore, the process of their formation should be be exposed to clear rules to meet the public's requirements and not to be rejected by them.

The problems of Berd are more urgent as they are in a restricted zone of other settlements of the region, they need self-sufficiency.

Key words: *public cluster, social integration, public infrastructure, diversity of functions.*

Գրականություն

1. https://en.wikipedia.org/wiki/Public_space.

2. ՀՀ Տավուշի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագիծ, Բերդի տարածաշրջան/ Հայնախագիծ ԲԲԸ, հեղինակներ՝ **Լ.Կ.Խաչատրյան, Ն.Գ.Պետրոսյան, Ս.Խ Գյուլխանջյան, Լ.Ս.Բաբայան և ուր.** – Երևան, 2017:
3. https://www.independent.co.uk/life-style/design/public-spaces-commuity-engagement-sustainable-development-public-park-a8221216.html.

References

1. Available at: https://en.wikipedia.org/wiki/Public_space
2. A project of spatial planning documents for micro-regional level of RA Tavush Province, Berd region, (2017) ArmProject OJSC, L.K Khachatryan, N.G Petrosyan, S.H. Gyulhanjyan, L. S. Babayan and others.
3. Available at: https://www.independent.co.uk/life-style/design/public-spaces-commuity-engagement-sustainable-development-public-park-a8221216.html

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Պետրոսյան Նունե Գագիկի, *ճարտ. թեկն., դոցենտ (ՀՃՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ակ. Ալ. Թամանյանի անվ. Քաղաքաշինության, ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, «Հայնախագիծ» ինստիտուտ ԲԲԸ, (+374)91356879, nunepet@yahoo.com,* ***Բաբայան Լիլիթ Սամվելի*** *(ՀՃՀ, ք.Երևան)-ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասպիրանտ, «Հայնախագիծ» ինստիտուտ ԲԲԸ, (+374)91728871, lilit.babayan93@gmail.com,* ***Գյուլխանջյան Սերոբ Խոսրովի,*** *Ճարտ.թեկն. (ՀՃՀ, ք.Երևան)- «Հայնախագիծ» ինստիտուտ ԲԲԸ, (+374)93219413, serobgyulkhangyan@yahoo.com*

Петросян Нуне Гагиковна, *канд. архит., доцент, (РА, г.Ереван)- НУАСА, Проблемная лаборатория Градостроительства, архитектуры и строительства им. акад. Ал. Таманяна, н.с., Кафедра теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, ОАО "Армпроект", (+374)91356879, nunepet@yahoo.com,* ***Бабаян Лилит Самвеловна*** *(РА, г.Ереван)- НУАСА, Кафедра теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, аспирант, ОАО "Армпроект", (+374)91728871, lilit.babayan93@gmail.com,* ***Гюлханджян Сероб Хосровович****, канд. архит. (РА, г.Ереван)- ОАО "Армпроект", (+374)93219413, serobgyulkhangyan@yahoo.com*

Petrosyan Nune *PhD(in archit.),, Associate Professor (RA, Yerevan)- NUACA, Problem Laboratory of Architecture and Construction after Academician Al. Tamanyan,-Chair of theory of architecture, restoration and reconstruction of historical heritage, fine arts and history, "Armproject" OJSC, mob. number (+374) 91356879, e-mail: nunepet@yahoo.com,* ***Babayan Lilit,*** *(RA, Yerevan) PhD student – NUACA, Chair of theory of architecture, restoration and reconstruction of historical heritage, fine arts and history, "Armproject" OJSC, (+374)93219413, serobgyulkhangyan@yahoo.com,* ***Gyulkhanjyan Serob****, PhD (in architecture), (RA, Yerevan) - "Armproject" OJSC, (+374)93 21 94 13, e-mail serobgyulkhangyan@yahoo.com*

Ներկայացվել է՝ 17.05.2018թ.

Ընդունվել է տպագրության՝21.05.2018թ.